

Հայ գրականության մարզային փուլ - 2022 թ.

Հարցաշարեր - 10-րդ դասարան - տևողությունը՝ 150 րոպե

Միայն հաղթանակ, սիրելի՛ մասնակից:

1. Նկարագրի՛ր Գրիգոր Լուսավորչի քարոզչությունը՝ ըստ Ագաթանգեղոսի: Հեթանոսական տաճարների կործանումը և եկեղեցիների ու դպրոցների հիմնադրումը:

5 մ.

2. Մեսրոպ Մաշտոցի տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության երթում: Մաշտոցը՝ երկրորդ Լուսավորիչ:

5 մ.

3. Ինչպե՞ս է բնութագրում ժողովուրդը «Մասնա ծոեր» էպոսի կանանց (բնութագրի՛ր՝ բնագրին հարազատ մնալով): Կանանց քանի՞ կերպար կա էպոսում: Մի քանի նախադասությամբ ներկայացրո՛ւ քո նախընտրած հերոսուհուն:

5 մ.

4. Ո՞վ է ներքոգրյալ առակի հեղինակը: Գրի՛ր այդ հեղինակի մասին. վերնագրի՛ր և մեկնաբանի՛ր առակը:

Մի մարդ կալից գրաստով գարի էր կրում տուն:

Եվ քուռակը մոր հետ գնում էր և հետ դառնում: Իսկ տանը, ուր կրում էին գարին, մի խոզ կար կապած, որին գիրացնում էին: Եվ գարին անպակաս էր նրանից, որպեսզի ուտի և գիրանա:

Եվ քուռակն ասաց մորը. «Ինչու համար այն խոզը առանց աշխատանքի ուտում է գարին, որ մենք կրում ենք մեծ դժվարությամբ և մեզ, որ չարչարվում ենք, օրը մի անգամ են գարի տալիս»: Մայրն ասաց. «Լսի՛ր, որոյա՛կ, և մի շաբաթ ևս համբերի՛ր, և ապա ես քեզ պատասխան կտամ, և քո աչքերով կտեսնես»:

Եվ մի շաբաթ հետո էլը և քուռակը բեռով տուն էին գալիս, քուռակը մորից առաջ էր գնում և լսեց խոնչոցի ահագին ձայն, որովհետև խոզը մորթում էին: Եվ խրտնեց քուռակը և հետ փախավ դեպի մայրը, և մայրն ասաց. «Ինչ եղավ, քեզ, որոյա՛կ, որ սոսկում ես, մի՛ վախենար խոզից, որովհետև նրանից գարու հաշիվն են ուզում»:

Եվ դարձյալ եկան կալը՝ գարի կրելու: Եվ երբ բարձած վերադարձան տուն, քուռակը, բարձրացնելով ոտքի սմբակը, մորն ասաց. «Ով մայր, տես, որ ոտքիս չի կպչել գարու մի հատ, որ ինձանից էլ հաշիվ ուզեն, ինչպես խոզից»:

5 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝

Ս. Աբազյան